



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2014թ. թիվ 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի N 85-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի» 14-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. մարտի 25
ք.Վանաձոր